ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

2 դեկտեմբերի 2024թ. թիվ 1410

Ա.ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով և 13-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ և 10-րդ կետերով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 2024 թվականի փետրվարի 26-ի «Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքացիական ծառայողների 2024 թվականի վերապատրաստման ծրագիրը հաստատելու մասին» թիվ 151 հրամանը և ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 2024 թվականի օգոստոսի 30-ի թիվ 05/114.1/07104-2024 գրությունը՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Արուս Թումանյանին 2024 թվականի դեկտեմբերի 9-ից 11-ը ներառյալ՝ երեք օրով գործուղել ք.Երևան՝ Պետական կառավարման ակադեմիա՝ «Կոնֆլիկտների կառավարում» թեմայով վերապատրաստում անցնելու համար:

2. Ա.Թումանյանի բացակայության ընթացքում Լոռու մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետի պարտականությունների կատարումը դնել մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ Արտյոմ Շահվերդյանի վրա:

3. Մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ սահմանված կարգով փոխհատուցել գործուղման հետ կապված ծախսերը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

12/2/2024

X

ՄԵՐԻ ԴԱԼԼԱՔՅԱՆ

Signed by: DALLAKYAN MERI 5303860493

Մ.ԴԱԼԼԱՔՅԱՆ

2024թ. դեկտեմբերի 2
ք.Վանաձոր